

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱԼԵՊԻ ՔԱՀԱՆԱՅԻՑ

ՏԵՐ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ՔԱՀԱՆԱՅԻՑ ՈՒՐՖԱՑԻ

(1606-1690)

ՀԱԼԵՊԻ ապօյին պատմութեան մէջ խատանքի . բայց հայ գրչազրութեան և հայ զարդանկարչութեան տեսակէտով՝ կը գրաւէ, և նոյնիսկ առանձին ուսումնա- սիրութեամբ հրատարակելի գործ, պատ- մութիւնը Հալէպի քահանայից, ուր 1490 թուականէն ասդին կանոնաւորաբար կը հաշուէ 200 է աւելի քահանաներու պատ- կառելի թիւ մը: Հալէպ, շնորհիւ ցամա- ցէն վաճառականութեան տեսակէտով իր գտած կարեւոր զիրքին, ժե զարէն ի վեր հայութեան համար նշանակելի կեղրոն մը, և այդ թուականէն ասդին Առաջնորդական և Մետրապոլական ակնառու ոստան մը հանդիսանալով, պահած է իր ազգային – եկեղեցական կազմակերպութիւնը, շնոր- հիւ իսկապէս արժանաւոր հովիներու, պատկառելի և բանիմաց քահանաներու և ժողովուրդի ազգասէր և կրօնական ներ- կայացուցիչներու, որոնց ուսման և յա- ռաջադիմութեան նոր շրջան մը բացած են պատմական Հալապ քաղաքի հայու- թեան մէջ և թողած մշակութային աման աշխատանք մը Հալէպի մէջ կա- տարուած է, ընդհանրապէս հայ քահա- նաներու կողմէ, որոնց կատարելապէս տիրացած ըլլալով հայ գրչութեան և հայ մանրանկարչութեան փափուկ ու պա- հանջուռ արուեստին բոլոր նրբութիւն- ներուն, հաւասարած են վանքերու գրիչ և արուեստագէտներուն, և ասոնցմէ պա- հանջուռ արուեստի բոլոր գաղտնիքնե- րուն կատարելապէս թափանցած են:

Հալէպ, ի բնէ, հայկական կեղրոն մը եղած չէ. ամէն տեղէ և զանազան զիրա- ւոր կեղրոններէ բազմաթիւ ազգայիններ պանդիստութեամբ Հալէպ եկած են, մա- նաւանդ Արեւելքէն և առեւտուրի և պատ- ասպարէզներու մէջ պատուարեր զիրք գրաւած: Հինէն ի վեր Հալէպ, հայու- թեան համար, «օրհնուած քաղաք» մը եղած է և բնական է որ քաղաքին հա- ւարածու հայութեան մէջ ակնառու տեղ գրաւողներ ընդհանրապէս եկորներն եղած են. նոյնը եղած է նաև Հալէպի հայ քա- հանայից համար, որոնց մեծագոյն մասը պանդիստութեամբ եկած է նոս հաստատուած

թեան և զարդանկարչութեան ազնիւ ար- հեստին և այնքան կը յառաջաղիմէ այդ ճիւղերուն մէջ որ իր կեանքը, գրեթէ ամբողջութեամբ կը նուիրէ անոնց և իր բոլոր ձեռագրաց յիշատակարաններուն մէջ երախտազիտութեամբ կը յիշէ ու- սուցչն անոնց, իր իր վրայ շատ աշ- խատանք ունեցող վաստակաւոր դաստիա- րակ: Դժբախտաբար այս զարգացած դասակարգի մասին ո և է տեղեկութիւն չունինք: Այս միայն յայտնի է որ ան սարկաւագ մնացած է միշտ, և Տէր Աս- տուածատուր, նոյնիսկ անոր մահէն վերջ, կը յիշէ միշտ Ստեփանոս քարտուղար: Ժամանակի կարգով հոս պիտի թուենք Տէր Աստուածատուր քահանայի ձեռագիր այն գրութիւնները որոնք ծանօթ են մեզի: Ապազային երբ հայկական բոլոր ձեռա- գրաց տպեալ մայր ցուցակներն աչքի առջեւ ունենանք, անկասկած որ անոնց մէջ պիտի հանդիպինք Տէր Հօր այլ ձե- ռագիրներուն:

Ա) 1626ին, տակաւին սարկաւագ աստի- ճանի մէջ, կը զրէ կիւրեղ Հայրապետի «Գիրք պարապմանց և լուծումն պարապ- մանց» հատորը, որ սեփականութիւնն եղած է Գաղատիոյ ձեռագրաց մատենա- գարանին, ուր կը կրէր 62 թիւը: Աս- տուածատուր զպիր կամ սարկաւագ այս զիրքը գրած է Հալէպի մէջ, յանձնարա- րութեամբ Տէր Ղուկաս Արքեպի և ասոր հոգեւոր զաւակին՝ Տէր Թողոս կրօնաւորի խնդրանքով:

Բ) Տէր Աստուածատուր քահանայի երի- տասարդական շրջանի յատուկ գրչական, մանաւանդ ծաղկանկարչական տաղանդին ամէնէն ազնիւ ու անկորնչելի յիշատակին է, իրը զոգեւոր եղբայր՝ մահտեսի Դրիգոր, երկուքն ալ շատ հաւասարար զաւակները Ղարիպի առաջին կնոջ:

Աստուր, տղայ տարիքէն օժտուած ըլլալով բացառիկ ընդունակութիւններով, հայրը Հալէպի մէջ զինքը կը յանձնէ Ստեփանոս սարկաւագ քարտուղարի խը- նամբին, որոնց ձեռքին տակ ապագայ Տէր Աստուածատուր կը հմտանայ գրչու-

ուստուն Մանկունք եկեղեցւոյ աւագ սեղանի բարձրաշխ աստիճանին վրայ և «պոսիխումէ»ն անով ըսուեցաւ Ա. Պատարազի միջոցին և օրուան բոլոր աւետարանները գեղազարդ նոյն զրչագրութեան վրայէն կարդացուեցան։ Աւելի քան 300 տարիներէ ի վեր անաղարտ մեացած և շատ լաւ պահպանուած մազաղաթեայ այս աւետարանն ունի 282 թերթ։ մեծութիւն՝ $15 \times 21 \times 3^{1/2}$ հրդմդր. երկսիւն, 21 տողով, ընտիր կազմով, հրաշալի վերնազրերով, գունագեղ սկզբնատառերով և շքեղ ու ծիրանեփառ լուսանցազարդերով, 201 հատ։ Խորաններու և պատկերներու զմայլելի հաւաքածու մըն է մատեանս, որ Ա. Քառասունք եկեղեցւոյ վերաշինութենէն 15 տարի վերջ նուիրուած է նոյն եկեղեցւոյ և ուր կը մեայ մինչեւ այսօր¹։

Գ) 1637ին Աստուածատուր սարկաւազը կը գտնենք քահանայ ձեռնադրուած, անկասկած Հալէպի առաջնորդ Տէր Յակոր քաջ և բարունի վարդապետ կարկառեցիէն։ Նոյն տարին Հալէպի մէջ զրած է պարզաւումար մը, որ մեզի անծանօթ պատճառներով սեփականութիւնն եղած է, ինչպէս իր «Գիրք պարապմանց»ը, Գաղատիոյ ձեռագրաց մատենադարանին (Յուցակ Գաղատիոյ ձեռագրաց, թիւ 261, Բարգէն կաթղկ. կիլիկիոյ, անտիպ)։ 1637 Մարտ 29ի Դշ. օրն աւարտած։

Այս պարզաւումարը, Տէր Աստուածատուր քահանայ զրած է իր հոգեւոր եղայրներէն Հոռոմիլայեցի Աթէնտի օղլու Տէր Յովհաննէս քհնյ. ի խնդրանցով։

Դ) 1640 Ապրիլ 13ի երկուշարթի օրը, Տէր Աստուածատուր քահանայ Հալէպի մէջ կը զրէ ու կը ծաղկէ մեր ձեռագրաց մատենադարանի թիւ 51 Աւետարանը, 264 թերթերով։ մեծ. $18 \times 13 \times 3^{1/2}$ հրդմդր.։ Զեռազրիս զրութիւնը երկսիւն է, տողը 21, նիւթն է լաւ յղկուած բամբակեայ ընտիր թուղթ։ Թէեւ հատորին արտաքին կազմը ամբողջովին վերցուած է, սակայն բուն զիրքը կը մեայ անաղարտ քով Տէր Աստուածատուրի այն ձեռագիր-

1. Տես «Բամկ», 1983 Ապրիլ, թիւ 4, էջ 154-8.

ջարդական մասը մեծ շքեղանք մը չունի թէեւ, բայց համապատասխան է իր ժամանակի նման արտազրութեանց։ Աւետարանս զրել տուած է Տէր Արքահամ քնյ. իր հօրը՝ Տէր Մարկոսին և ընտանեկան այլ ննջեցելով յիշատակին համար։

Ե) 1651 Փետրուար մէկին, Տէր Աստուածատուր քհնյ. Հալէպի մէջ կ'աւարտէ գրութիւնն ու ծաղկում մեր ձեռագրաց մատենադարանի թ. 26 Աւետարանին, 312 թերթերով և $10^{1/2} \times 10^{1/2} \times 3$ հրդմդր. մեծութեամբ։ Աւետարանիս զրութիւնը երկսիւն է, տողը 21, լաւ յղկուած բամբակեայ թուղթով։ Ունի կաշեպատ կազմ տախտակեայ եւ կողքերու բեւեռներէն յայտնի է որ ժամանակին ծածկուած է արծաթեայ զարդերով։ Հատորիս զարդական մասը բաւական ճոխ է, մանաւանդ խորաններով և աւետարանիշներու ոսկեյատակ նկարներով, ուր կը պակսի Մարկոսինը միայն, որ հաւանարար ինկած է ու կորսուած։ Աւետարանիս ստացողն է Տէր Ներսէս քհնյ., որ 1683ին կը ծախէ զայն և մահտեսի կիւլամիր գնելով յիշատակ կը գնէ Ա. Քառասունից եկեղեցին, ուր մեայ մինչեւ այսօր։ Զարմանալի է որ Տ. Աստուածատուր քհնյ. իր կեանքի ամէնէն առոյգ ու բեղմնաւոր շրջանին, միայն մէկ ձեռագիր թողած է, վերցրեալ թիւ 26 Աւետարանը։ Մեր տեսած կամ պրատած իր զրչութիւնները կը պատկանին 1640էն առջի և 1660ի ընդհանրապէս վերջի շրջաններուն։ Դժուար չէ մտաքերել որ քսան տարուան երկարատեւ շրջանին Տէր հայրը արտադրած է զրչութեան և արուեստի ընտիր այլ նըմոյշներ, որոնք սակայն կամ կորսուած են և կամ կը մեան ձեռագրաց այն անտիպաց այլ անտիպաց շուցակներուն մէջ, զորս դժբախտաբար տեսած չենք։ Որպէսզի կարելի ըլլայ մասամբ գէթ լրացնել այս պատուական արուեստագէտին կենսազրութիւնը, շերմապէս կը խնդրենք հնագէտ և բանսէրներէն՝ որ համին իմացնել մեզի, եթէ ունին կամ տեսած են, մասնաւորներու քով Տէր Աստուածատուրի այն ձեռագիր-

ները, որոնց ցարդ անծանօթ ըլլալով մեզի դուրս մնացած են մեր ցանկէն։

Զ) 1660ին, Տ. Աստուածատուր քհնյ. Հալէպի մէջ կը զրէ ու կը ծաղկէ մեր ձեռագրաց մատենադարանի թիւ 99 մաշտոցը, Արքակիրցի «սրբաւէր, հեզանոզի և բարեպաշտ» Մարգարի խնդրանցով և որ յիշատակ կը դրուի Ա. Քառասունը եկեղեցւոյ մէջ։ Զեռազրիս հին թիւն է 59. ունի 109 թերթ։ Մեծութիւնն է $18 \times 13^{1/4} \times 2^{1/2}$ հրդմդր. երկսիւն գրութեամբ և իւրաքանչիւր էջ 18 տողով։ Նիւթը հասարակ թուղթ է՝ բամբակեայ. կազմը՝ արեւելեան, շագանակազոյն կաշեպատ տախտակեայ թիկունքով։ Մագաղաթեայ պահպանակներէ զուրկ է եւ այնքան գէշ պահուած է որ զրեթէ անձնանշելի գարձած է, մուկերու աւերի մը տակ, որ բոլոր թերթերուն վրայ յայտնապէս միայն կամ արեւելեայ, թափանցելով դուրսէն դէպ ի ներս, մինչեւ իսկ բուն զրութեան վնասելով։ Ներցին ցանի մը թերթերը կարէն ինկած են։ Գիրը սեւ մելանով, միջակ բոլորագիր է։ համարազլումները կարմիր սիրուն երկաթագիր են։ Սկզբնատառը՝ փառազիր և թոչնազիր, կանաչով և կարմիրով խառն։ իսկ թիւով 17 ներցին զլսագրերը բոլորն ալ հասարակ սիրուն են։ Լուսանցազարդերը, թիւով 17, բաւական սիրուն են, բայց զրեթէ բոլորն ալ վնասուած ու անճանաշելի զարձած։ Ունի վայելուչ խորան մը, ինչպէս նաեւ կիսախորան մը։ Տղայաթաղի կանոնին վերեւը զրուած, միեւնոյն ոճով։ Վերնազիրը միայն երկու տող են՝ սկիզբը. առաջինը թոչնազիր-զարդագիր, կարմիրով խառն, իսկ երկրորդը՝ կարմաղեղ երկաթագիր։

Է) 1661 Մայիս 20ին Տ. Աստուածատուր քհնյ. Հալէպի մէջ կ'աւարտէ ժամակարգութիւն մը, ի վայելումն մահտեսի խոճայ Մարգահին և իր որդիներուն՝ Պէկի շալապուն և Պէկլար չալապուն և թոռնիներուն՝ Եղիա և Յակոպ չալապուն և Պէկլար չալապին համար կը յիշուի իրը զրեթէ անդամ կողերը ելած են, տեղ տեղ ալ լուսանցը մաշած են ու կարկտուած։ Դաւթի պատկերն ու կիսախորանը վնասուած են և գոյներն իւրաու փոխանցուած։ Գիրը մանրիկ նորագիր է, լայն լուսանցը ներու։ զարդագիրը շատ շատ են, կիսախորանը 8 հատ, ուկեզարդ և զեղեցիկ, իսկ լուսանցազարդը յոյժ բազմաթիւ են, և հնագլաւկան

անձ։ Ամանոս, Պետրոս, Շաղաւաթ եւ Սահակ հարազատ շալապիներուն և Ասոսի որդի շալապիէն վերջ, այս իշխանները համբաւաւուր և ազգասէր վաճառականներ եղած եղած են Հալէպի մէջ, և նման առաջիններուն՝ հանդիսացած են բարեպաշտ ու աղօթաւէր, և նոյն ողիով այս ժամակարգութիւնը Տէր Աստուածատուր քահանային զրել տուած են, առանին գրութեամբ յայտնի չէ, ինչպէս որ ցարդ կարելի չեղաւ նոյն ճշումներն ընել առաջիններուն համար։ Այս «Կարգաւութիւն հասարակաց աղօթից պատագամատոյց»ը, որ թիւ 134ով այժմ կը մնայ Զմմառու վանուց մատենադարանը, հաւանարար 1710էն յիտոյ Հալէպին հոն փոխազրուած, այլ ձեռագրաց հետ։

Ը) 1662ին, Տէր Աստուածատուր քհնյ. Հալէպի մէջ կը զրէ փոքրիկ Սաղմոսարան, «կատարեալ ամենայն իրօց», օրինակուած լաւ և ընտիր գաղափարէ մը, ուստի և կրնակի յարգի։ Կը պարունակէ նաեւ Շնորհալիի «Հաւատով խոստովանիմ»ը, անթերի։ Թէեւ սաղմոսարանիս ծաղկողն անյայտ է, բայց ամենայն հաւանականութեամբ Տէր Աստուածատուր ինցն է։ Ինչպէս ուրիշ շատ մը ձեռագրեալ արեւագիր է, այնպէս ամբունակ կամ արագագիր է։ համարազլումները միջակ բոլորագիր է։ համարազլումները թուղթեամբ սաղմոսարանիս ծաղկողն անյայտ է, բայց ամենայն հաւանականութեամբ Տէր Աստուածատուր ինցն է։ Ինչպէս ուրիշ շատ մը ձեռագրեալ արեւագիր է, այնպէս ալ այս սաղմոսարանը ինցն է որ ծաղկած է։ և համեստութեամբ չէ ուզած իր անուն յայտնել։ Տէր հայրը ասկեզարդ սաղմոսարանը զրած է կ. Պոլսեցի խոճայ Տիրացուի խնդրանցով։ Ունի 245 թուղթ։ մեծ. $11 \times 7,5$ ($5^{1/2} \times 3^{1/2}$), միասին գրութեամբ, 17 տողերով, թերթը 21, իւրաքանչիւրը 12 թուղթը։ Նիւթը ազնիւ թուղթէ և կազմը փայտեայ կաշեպատ։ կազմին հետ կողերը ելած են, տեղ տեղ ալ լուսանցը մաշած են ու կարկտուած։ Դաւթի պատկերն ու կիսախորանը վնասուած են և գոյներն իւրաու փոխանցուած։ Գիրը մանրիկ նորագիր է, լայն լուսանցը ներու։ զարդագիրը շատ շատ են, կիսախորանը 8 հատ, ուկեզարդ և զեղեցիկ, իսկ լուսանցազարդը յոյժ բազմաթիւ են, և հնագլաւկան

տեսակէտէ ուշադրութեան արժանի յատ-
կապէս խորանաձեւ մատուռիկները՝ իրենց
մէջ կափուած ոսկեայ կանթեղներով եւ
խաչերով։ Բէնի մէկ նկար և 16 մանրանկար
լուսանցքներու մէջ։ Բոլոր այս նկարներն
ալ ուշադրութեան արժանի են հնութեան
տեսակէտով։ Թէեւ սազմոսարանիս ծաղ-
կողն հո՞ս ալ անյայտ է, բայց դժուար
չէ ենթազրել որ Տէր Աստուածատուր
քահանայ ինքն է զայն կազմողը. (Տես
Աստուածատուր պատճեան 15-ի և 16-ը օ. 10)

թ) 1665 Սեպտ. 7ին, Տէր Աստուածատուր քահանա ցուցակ, Վաստարկ, Էջ 219):

Թ) 1665 Սեպտ. 7ին, Տէր Աստուածատուր քահանա ցուցակի մէջ կը գրէ և կը ծաղկէ մեր ձեռազբաց մատենադարանի թիւ 124 խորհրդատեսրը, որ ապա յիշատակ կը դրուի ատկէ բիշ առաջ վախճանող Տ. Առղումոն քահանային: Զեռագիրսունի միայն քսան թերթ, մեծութիւնն է՝ $28\frac{1}{2} \times 19$ հրդմղր.: Երկսիւն, տողը 21, բամբակեայ հաստ թուղթ, արեւելեան կաշեպատ կազմ. գեղարուեստական արժէքը՝ միջակէն վար:

ժ) 1667ին, Տէր Աստուածատուր քահանայ, զարձեալ Հալէպի մէջ կը զրէ ու կը ծաղկէ մեր ճեռագրաց մատենադարանի թիւ 123 խորհրդասեարք . թուղթը 21 . մեծութիւն՝ $28 \times 19\frac{1}{2} \times 1$ հրմգը . , երկասիւն, տողը 19, զեղնորակ, լաւ յդկուած հաստ թուղթի վրայ, զարդական համեստ արուեստով : Զեռագրիս ստացողներն են Հալէպի ներկարար վարպետ Եղուսուփ և Կիշնը, Զեւլֆի, և որ յիշատուկ կը դրուի

Ա. Քառասունք եկեղեցւոյ մէջ, ուր կը
մնայ մինչեւ այսօր։ Այս խորհրդատեարին
կողը թէեւ վասուած և ներքին թերթերը
մասամբ սեւցած ու գոսացած, բայց նորո-
գութեամբ կարելի է այսօր ալ զործածել,
ըլլալով յար ենման տպագիր օրինակներու։

ժԱ) 1673ին, Տ. Աստուածատուր քնն. Հալէպի մէջ զրած ու ծաղկած է մեր ձեռագրաց մատենադարանի թիւ 102 թրդթեայ փոքր մաշտոցը, Ա. Աստուածածին եկեղեցւոյ ժողովրդեան խնդրանքով և հոն յիշատակ դրուած։ Ունի 120 թերթ, մեծութիւն $19\frac{1}{2} \times 13 \times 2\frac{1}{2}$ հրմգը. միասիւն, 21 տողնոց էջերով։ Զարդական մասը,

ինչպէս Տ. Աստուածատուրի գրեթէ բոլոր
զորձերը, հո՞ս ալ յաջող է և ակնառու։
Ունի 27 փոքր լուսանցագարդեր, բոլորն
ալ մաքուր և ճաշակաւոր։ Գեղեցիկ ձե-
ռագիր մ' է հատորս, գրուած Հալէպի
Առաջնորդ Տ. Ազարիա Զուլայեցիի օրով,
ապա կաթողիկոս Կիլիկիոյ և վախճանած
ու թաղուած Հալէպի մէջ :

ԺԲ) 1679 Ապրիլ 11ին, Տ. Աստուածատուրը քննի է Հալէպի մէջ կը լրացնէ գրութիւնն ու ծաղկումը մեր ձեռագրաց մատենագարանի՝ թիւ 105 Տօնացոյցը, Յովհաննէս անուն ազգայինի մը խնդրանքով, որ փափաքեր է իր առանին գործածութեան համար ունենալ: Կը պարունակէ 237 թուղթ, մեծութիւն՝ $15\frac{1}{2} \times 9 \times 2\frac{1}{2}$ հրմգը. միասիւն գրութեամբ և 18 տողնոց էջերով: Նիւթը բամբակեայ հասարակ թուղթ է, կազմը վեստուած և կարելէն մասը միայն մնացած: Զարդական բաժինը հարուստ չէ. բոլորն ալ պոռոտ գոյներով ջրաներկի պարզ փորձեր են: Լամ այն է որ ուրիշը աշխատած է ծաղկումի մէջ և կամ գրիչը, ծերութեան մէջ, չէ կը ցածրած պէտք եղած փայլը տալ: Հասորը որ միեւնոյն ժամանակ Աշխետարանացոյց ալ է, նոտրագիր է և հաւանական է որ գըրած ըլլայ ծերութեան վերջի տարիներուն մէջ: Հոս ալ, պատուական Տէր հայրը, երախտագէտ սրտով կը յիշատակէ իր վաստակաւոր ուսուցիչը, Ստեփանոս բաջ Քարտուղարը:

ԺԳ) 1681 Օգոստոս 24ին, Տէր Աստուածատուր քահանայ Հալէպի մէջ կ'աւարտէ փողը Տօնացոյց մը, Մարանէի խնդրանքով, որ զայն կը նուիրէ Ա. Քառասունք եկեղեցւոյ, և ուր կը մնայ մինչեւ այսօր, կրելով հին 48 և ի նորոյ 108 թիւերը: Այս ձեռագիրը որ լաւ պահպանուած է և ոչ մի պակաս թերթ ունի և ոչ ալ ցեցի կամ խոնաւութեան հետք, ունի 227 թերթ. մեծութիւնն է $14\frac{1}{2} \times 9\frac{1}{2}$ \times 3 հրմզը. միասիւն զրութեամբ և 17 տողնոց էջերով: Նիւթը լաւ յդկուած մաքուր թուղթ է. իսկ կազմը՝ արեւելեան, կաշեպատ խաւաքարտեայ, մանուշակա-

գոյն կարմիր, լանջքով ու թիկունքով : Ունի մէկ խորան միայն և զեղարուեստական արժէքէ առ հասարակ զուրկ է : Գրիչը, խոր ծերութեան հասած, աւելի հետամուտ եղած է օգտակարին, քան թէ հաճելիին : Տօնացոյցիս ստացողը, Մարանէ, իր հալաւ վաստակովը՝ զբել կու տայ զայն և յիշատակ կը դնէ Ս. Քառասունք եկեղեցին, իր և իր կողակից Ապտըլլատիմի հոգւոյն : Յիշատակարանին մէջ կը յիշուին նաեւ Մարանէի հայրը՝ Մեսրոպ, մայրը՝ Ճօհար, և Նումէ, Խանում, Շահմելիք, Ներսէս, Պօղոս, Մարթա, Վարտէ, Խանում և Ներսէս որդիներն ու պարագաները : Հո՞ս ալ, երախտագէտ Տ. Աստուածատուր կը յիշէ իր ուսուցիչը, Մտեփանոս քաջ քարտուղարը, «որ բազում աշխատութիւն աշխատեցաւ ի ուսուցանելն զանարժանս, տէրն մեր Յիսուս Քրիստոս երկնաւոր վարդապետն իւր աշխատանաց փոխարինին միոյն հազարապատիկ և բիւրապատիկ հատուցէ ի հանդերձեալ դատաստանին ամէն» :

թագիր են: Լուսանցազարդերը, թուով 27, նոր կազմի ատեն դանակի տակ մասամբ կտրատուած և կիսուած են: Զարդական մասը զուրկ է արժէքէ: Իր բազմաթիւ գրչութեանց մէջ, այս մաշտոցի առաջին մասը կարելի է նկատել Տ. Աստուածատուրի վերջին երկը, ուր զրիչն ալ, վրձինն ալ, մելանով ու երանգապնակով, կը մնան լքուած, ու բազմարդին Տէր հայրը այլեւ չ'ապրիր և կը վախճանի, ըստ մեր ենթազրութեան դէպի ի 1690, բոլորելով յիսնամեայ քահանայութեան ոսկեպինիկ և գործունէութեամբ ի երկարատեւ շրջան մը: Խոր ծերութեան մէջ իսկ չի դաշըիր գրելէ, ընդօրինակելէ, ծաղկելէ, և անշուշտ կարգալէ, մինչեւ իսկ մահուան անկողնին մէջ, ու կը թողոքանիմաց, լուրջ ու գրասէր արուեստագէտ քահանայի մը բարի, արդար և անկորնչելի համբաւը: Անիկա Հալէպի քահանայից հարուստ պատմութեան մէջ ունի իր շատ արժանաւոր տեղը, իբր վաստակաւոր եւ անվիճակ աշխատաւոր կոօնսական մը: Տէս Աստուածատուր ան-

ժԴ) 1688 էն քանի մը ամիս և առառաւելն տարի մը յետոյ, Տէր Աստուածատուր քահանայ Հալէպի մէջ կը սկսի զրել մեր ձեռագլաց մատենադարանի թ. 101 փոքր մաշտոց, որուն 192ըդ էջին կը հասնի միայն, չկարենալով խոր ծեղանիթեան մէջ լրացնել զայն, և անձանօթ մը, հաւանաբար իր բնատանեկան կամ եւ կեղեցական շրջանակէն, կը լրացնէ զայն։ Զեռագիրս ունի 234 թերթ. մեծութիւնն է $17 \times 11\frac{1}{2} \times 3$ հրմգր. երկուին զբութեամբ և 21 տողնոց էջերով։ Ունի, իրը նիւթ, լաւ յղկուած բամբակեայ թուղթ, կաշեպատ արեւելեան կազմ, խաւաբարտեայ, վրան բեւեսի հետքերով։ Մաշտոց, զործածութեամբն հետազայ ծխակատարներու կողմէ, հինցած է և սկիզբէն 25 թերթ ինկած։ Ներթին մասը շատ տեղ մաշած ու կարկտուած է։ ներսէն եւս շատ մը թերթեր ինկած և տեղը նորը զրուած ու դրուած։ Գիրը սեւ մելանով միջակ բոլորագիր է։ Համարներու գլուխները կարմրագեղ և սեւով խառն երկա-

թուականներէն ասդին եղած է անոր լուսատու ջահերէն։ Դժբախտաբար, հակառակ մեր անվհատ պրատումներուն, ցարդ չկրցանք գտնել Տէր Աստուածատուրի դամբարանը. անկասկած է որ անոր նուիրական աճինները կը գտնուին մայր եկեղեցւոյ ներքին գաւկիթը, այժմու մեծ զանգակատան ստորոտը։

Ուրֆացի այս Տէր Աստուածատուրի ժամանակակից է Մարտինցի ուրիշ Տէր Աստուածատուր մը, մահտեսի, որուն մականունն է Ապուռշահի, և զոր պէտք չէ շփոթել առաջինին հետ։ Մարտինցին զաւակն է Սահակ և Մարիամ Ապտուլահին։ Ասոր ալ զաւակն է Տէր Թուրուքահանայ. ունեցած է նաեւ ուրիշ չորս զաւակներ, Յակոբ, Ներսէս, Յարութիւն և Խաչատուր, որոնք 1671էն առաջ մեռած են արդէն։ Եղբայրներն են Ղազար, Ամիրշահ, Դանիէլ. հօր Կողմէ մեծ հայրն է Տիրացու Ապտուլա, մեծ մայրն է Ճանէ. մօր Կողմէ մեծ հայրն է Տէր Ապտուլահ, մեծ մայրն է Խաթուն։ Երցկինն է մահտեսի Վարդիսաթուն, որոն հայրն է Ֆրանկիւ և մայրը՝ մահտեսի Մարթա։ Տէր Աստուլլահ կանուխէն Հալէպ եկած և հաւանաբար Հալէպի մէջ ալ ձեռնադրուած է։ Ան Հալէպի հայց քահանայից դասուն մէջ պիտի թողու յաւէտ անջնջելի անուն մը, որովհետեւ նախ 1650ին Տէր Սահակ քահանայի զրել կու տայ մեր ձեռագրաց մատենադարանի թ. 152 լիակատար, մեծադիր և կարեւոր Յայսմանրքր, ուր կան տարուան բոլոր օրերու յատուկ վկայաբանութիւններն ու կցորդները, յար և նման բովանդակութեամբ մեր 147 և 148 թիւ յայսմաւուրքներուն։ Հոս զրիչը աւելի ուշադիր եղած է ընդօրինակութեանց մէջ, և իրը համեմատաբար նոր գրչութիւն, հետեւած է ճշդագոյն քերականութեան մը։ Սոյն Յայսմաւուրքը լրացած է 1650 Յուլիս 26ի ուրբաթօրը, Կիլիկիոյ Տէր Ներսէս կաթողիկոսի օրով։ Իր ջանքերուն և մանաւանդ նիւթական մեծ զոհողութեան կը պարտինք նախամարդու մեծ մասաւագրաց մատենադարանի թ. 152 լիակատար, մեծադիր և կարեւոր Յայսմանրքր, ուր կան տարուան բոլոր օրերու յատուկ վկայաբանութիւններն ու կցորդները, յար և նման բովանդակութեամբ մեր 147 և 148 թիւ յայսմաւուրքներուն։ Հոս զրիչը աւելի ուշադիր եղած է ընդօրինակութեանց մէջ, և իրը համեմատաբար նոր գրչութիւն, հետեւած է ճշդագոյն քերականութեան մը։ Սոյն Յայսմաւուրքը լրացած է 1650 Յուլիս 26ի ուրբաթօրը, Կիլիկիոյ Տէր Ներսէս կաթողիկոսի օրով։ Իր ջանքերուն և մանաւանդ նիւթական մեծ զոհողութեան կը պարտինք նախամարդու մեծ մասաւագրաց մատենադարանի

արուեստի։ Եթէ Մարտինցի այս ազգասէր քահանային ջանքերը ըլլային, զժուար չէ գուշակել որ այս թանկարժէք և պատմական անտիպ ու վաւերական ժամանակագրութեամբ ճոխացած արքայական այս յիշատակը պիտի կորսուէր առ յաւէտ։ Տէր Ապտուլահ, ինչպէս որ յայտնի կ'երեւայ էջ 189ի վրայ թողած լման էջ մը ինքնազիր արձանագրութենէն, ինքն ալ զրիչ ու ծաղկող ըլլալով, գնահատած է մատենիս կարեւոր ուրութիւնն և զայն ի պահ զրած Ա. Քառասունց եկեղեցւոյ մէջ։ Մնջը որ, սակայն, իրմէ յետոյ, ան առօրեայ գործածութեան համար, տրամադրուած է եկեղեցւոյ մէջ և այս պատճեռապաւ չարաշար գործածուած և մասնաւորար Շարականի մասը ծածկուած է այս մեծագոյն յիշատակը գրուած է Սոյոյ մէջ, 1319 Յունիս 18ին, ձեռամբ Տէր Յակոր քահանայի և յանձնարարութեամբ Տէր Թորոս աւագերէցի և հրամանաւ «քարեպաշտ ու աստուածատէր Օշին թագաւորին»։ Զեռագիրս ունի 507 թերթ։ մեծ. 33×22×11 հրդմդր։ Գրութիւնս միասիւն է, ի բաց առեալ Յօնացոյցի մասէն՝ որ երկսիւն է (էջ 517-538)։ Տողերն են ընդհանրապէս 30. 32. 33. իսկ մանրագաս Յօնացոյցի տողերն են 60։ Նիւթը, ծայրէ ծայր, թաւշանման ազնիւ մագաղաթ է, կիսովին փայլուն ու թափանցիկ տեսակէ, կիսովին թանձր ու մասամբ նուրբ։ Կազմը արեւելեան է, բաց շագանակագոյն կաշեպատ, խաւացարտեայ, հաստատուն կողքով, որ կը թուի տեսած ըլլալ զանազան նորոգութիւններ, ուր, սակայն, անուշագրութեամբ ձեռագրիս մասերը իրարու մէջ անցած են։ Մենք կը խորհինց ուշագրութեամբ քակել տալ ամրող հատորը և բոլոր մասերն իրարու յաջորդական ուղղութեան մէջ զնել և այնպէս կազմել տալով, ի նորոյ թուագրել բոլոր էջերը, այս անգամ գունաւոր մելանով։ Հատորս թէիւ չունի գեղարուեստական ճոխութիւն, բայց հակառակ այդ պակասին, ան, իր էջերուն մէջ կը պահէ զգալի օքութիւն մը սրբազան գեղ-

կակծալի կորուստէն, Արարածոց գիրքը ուզած ըլլայ յիշատակ թողուլ իր միակ զաւկին, Տէր Թորոս քահանային և ասոր զաւակներուն։ Այս հնարոյը մատենը, որ բաց ի կողքերու պակասէն ուրիշ թերի չունի, կը բովանդակէ 204 թերթ։ մեծ. 16^{1/2}×12×3 հրմդրմ., 19 տողնոց էջերով, բամբակեայ, սպիտակ ու լաւ յըղկուած թուղթի վրայ։ Զեռագիրս, ինչպէս կ'երեւայ, զուրկ է ծաղկում։ Յիշատակարանին մէջ Տէր Աստուածատուր կը վկայէ որ ծերութեան մէջ զրած է այս հատորը, թէ ինք, հակառակ ուսումնական մը չըլլալուն, ջանազիր եղած է իր պարապոյ ժամանակի լուսատինն ազայն ի պահ զրած է այս հատկացնելու, սորվելու և զարգանալու և չէ ուզած երբեք «անբան» մնալ, ու միշտ «մշղլ» եղած է։ Ի կենդանութեան, եկեղեցւոյ կը նուիրէ իր միակ որդին, Տէր Թորոսը, որու մասին դժբախտարար շատ բան չենց գիտեր։ Ան 1714ին կը վախճանի և կը թաղուի Ազիզիկի Ազգային Գիրեզմանատան մէջ, հաւանաբար իր հօրը հողակոյտին կից։

Հոս աւելցնենց թէ Տէր Աստուածատուր քնյ. դարձեալ կը յիշով մեր ձեռագրաց մատենագարանի թ. 39 Աւետարանը կազմել տալուն առթիւ Տէր Պետրոս քնյ.ի ձեռցով։

Արտասահմանական